ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԵՐԿԱՆՅԱՆ. Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905 թթ.), ԴԱ Հրատարակչություն, Երևան, 1970, 309 էջ:

XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական մտքի պատմությունը թերի կլիներ առանց դպրոցական շարժման պատմության վերհանման, առանց այն հսկայական չանքերի վերագնահատման, որ նվիրել են դպրոցների աշխատանքների կազմակերպման գործում հայ մտավորականները։

Սովետահայ բանասերները և հայ մանկավարժության պատմաբանները նշանակալից աշխատանք են կատարել հայ մանկավարժության անցած ճանապարհի ուսումնասիրության համար։

Մեծ նորություն է բերում պատմաբան հեղինակի դիրքը սովետահայ մանկավարժական գիտության ընդհանուր։ Վահե Երկանյանը անպայման նոր խոսք է ավելացնում նշածին, պատմական տնտեսագիտությունով լուսաբանում առաջին պահ նեղ մասնագիտական թվացող մանկավարժական ոլորտի հարցերը։ Մեր կարծիքով, աշխատության ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակը մեր իրականության մեջ առաջին անգամ ստեղծել է Կովկասի հայ դպրոցների բաղմակողմանի պատմությունը, այդ դպրոցների կազմավորման, զարգացման, հարատևման համար մղված պայքարի լայն ֆոնի վրա։ Ոչ մեկը չի ժխտում, հարկավ, այն միտքը, թե պետականությունից զրկված հայ ժողովրդի համար դարեր շարունակ քաղաքական ինչ կշիռ է ունեցել նրա դպրոցը։ Վ. Երկանյանը ոչ միայն բազմաթիվ փաստերով հաստատում է հայ դպրոցին բաժին ընկած պատմական այդ միսիայի կարևորությունը, այլև վեր է հանում ցարիզմի բյուրոկրատական ապարատներում ձևավորված միջոցառումները՝ հայ դպրոցի ձեռք բերած քաղաքական նշանակությունը չեզոքացնելու ուղղությամբ։ Նրան հետախուզական աշխատանքով Երկանյանը վերականգնել է XIX դ. վերջին քառորդում ցարական Ռուսաստանում միմյանց դեմ ծառացած երկու ուժերի անտես մենամարտի իրադրությունը։ Պատմական մեծարժեք փաստաթղթերի հրապարակումով նա բարձրացրել է խորհրդավոր այն վարագույրը, որի տակ տասնամյակներ շարունակ գոտեմարտում էին պաշտոնական բյուրոկրատիան և բանականության շնորհներով ապրել տենչացող մի ժողովրդի լուսավորության մշակները։

Վահե Երկանյանը, դրան զուգընթաց մեծ բարեխղճությամբ շարադրել է Կովկասի հայ դպրոցների գործունեության պատմությունը՝ XIX դ. 70-ական թվականներից մինչև 1905 թ.։ Անկախ այն շարժառիթներից, որոնցով առաջնորդվել է հեղինակը, պատմական այդ ժամանակահատվածի ընտրությունն արդարացի է նաև այն առումով, որ պրոֆեսոր Մ. Սանթրոսյանն արդեն ստեղծել է «Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին» մեծարժեք մենագրությունը։ Այստեղ բազմակողմանիորեն լուսաբանված է Ռուսաստանում հայ դպրոցների վիճակը, դրանց զարգացման առաջին էտապում։ Մի շարք կողմերով ուշագրավ այս աշխատության հեղինակը հարցի պատմությունը հասցրել է մինչև 50-ական թվականները, որտեղից էլ, ըստ էության, սկսում է իր ուսումնասիրությունը Երկանյանը։

XIX դ. 50—60-ական թվականների ժամանակաշրջանը Վ. Երկանյանը բնութագրում է իբրև հայ դպրոցի դաղափարական հիմնավորման շրջան, որից հետո դպրոցը մտնելով զարգացման հաստատուն հունի մեջ, ձևավորվում է իբրև աշխարհիկ, մասսայական դպրոց։ Նա բազմապիսի աղբյուրներից քաղված փաստերով ճշգրտում է դպրոցների քանակը (դրանց զարգացման տարբեր էտապներում), ուսուցիչների և աշակերտների թվական կազմը, դասավանդվող առարկաների դանկը, պարզում է ուսուցիչների աշխատավարձի սիստեմը, նրանց կրթական ցենզի հետ կապված հարցերը և այլն։ Աշխատության մեջ տրվում է ժամանակի դպրոցական երեք հիմնական տիպերի բնութագիրը (ծխական, հոգևոր և թեմական)։ Եզրակացությունն այն է, որ թեև ժամանակի սոցիալ-տնտեսական պայմաններից գրգռված հայ դպրոցները մտել էին լուսավորչական եկեղեցու հովանու տակ, ընդունել «հոգևոր» անվանումը, բայց իրականում մերժում էին կղերական ոգին և ամուր կանգնած լինելով աշխարհիկ սկզբունքների հողի վրա, լայնորեն ընդառաջում էին առաջադեմ-ժողովրդական որոնումներին ու ձեռքբերումներին (էջ 64)։

Դպրոցական շարժումը հեղինակը ներկայացնում է ժամանակի կովկասահայ իրականության մեջ ծավալվող մշակութային շարժման հետ դրա ունեցած առնչությունների մեջ։ Եվ այդ հասկանալի է։ Բուրժուական զարգացման ոլորտները ոտք դրած հայ հասարակությանը հար-

կ–ող էր հասցնել ազգային ինքնաճանաչության. անհրաժեշտ էր զարկ տալ ժողովրդի լուսավորման գործին, ուստի հայ մտավորականներն այդ նպատակին էին ծառայեցնում ոչ միայն դպրոցները, այլև հասարակական ընկերությունները, զանազան միություններ, ընդլայնում էին գրադարանների ցանցը և այլն։

Երկանյանը հակիրճ գծերով ներկայացնում է Կովկասի «Բարեգործական», Բաքվի «Մարդասիրական» ընկերությունների ու դրանց մասնաճյուղերի գործունեությունը։ Նա բնութագրում է XIX դ. վերջին քառորդում ստեղծված մանկավարժական պարբերականները, վեր հանում հայ մանկավարժական գիտության զարգացման առանձնահատկությունները. նոր կազմակերպված ազգային մանկավարժական սիստեմը գնահատում նրա դեմոկրատական էությամբ։ 1882 թ. ուսուցչական ժողովը գրքի հեղինակը ամենայն իրավամբ դիտում է իբրև արևելահայ դպրոցական շարժման բարձրակետը, որը հավաստում էր հայ դպրոցի աշխարհականացման փաստը և ազգային կրթության կատարելագործման երևույթը։

Կենտրոնական պատմական արխիվներում պահվող՝ ժամանակի պետական գործիչների քաղտնի գրագրությունների հրապարակումը հստակ լույս է սփռում փոքր ազգությունների ռուսացման ցարիզմի քաղաքականության վրա։ Մեկ անգամ ևս ապացուցվում է այն ճշմարտությունը՝ թե հայ ժողովրդի համար ճակատագրական այդ օրերին որքան նպատակասլաց էին գործում հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք ժողովրդի պայքարն ուղղում էին դեպի ցարիզմի տապալման միակ հեռանկարային նպատակը։ Խորապես արժեքավոր են գրքի այն էջերը, որտեղ լուսաբանվում է հայ եկեղեցական գույքը բռնագրավելու վերաբերյալ 1903 թ. հունիսի 12-ի օրենքը և նկարագրվում է ժողովրդի դիմադրական շարժումը։

«Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում» մենագրությունը գրված է գիտական բացառիկ բարեխղճությամբ և լեզվական բարձր կուլտուրայով։ Այն մեծ օգնություն կարող է ցույց տալ հայ հասարակական մտքի, մասնավորապես հայ դպրոցների պատմությամբ զբաղվող մեր մտավորականությանը։

Գրքում նկատվող առանձին վրիպումները անխուսափելի են նման աշխատության համար, որի ընդգրկումների լայն շրջանակը, բնականաբար, իր հետ բերում է և որոշ հարցերի սեղմ կամ նույնիսկ սխեմատիկ մեկնաբանություն։ Այսպես, մեր կարծիքով, առանձին մանկավարժներին տրված գնահատականների հարաբերության առումով, անարդար լինելու չափ զուսպ է ներկայացված Խորեն Ստեփանեի գործունեությունը, այնինչ Ստեփանեն թե՛ մանկավարժական աշխատանքի իր անուրանալի եռանդով, և՛ թե լրագրության ասպարեզի վաստակով նվաճել է մեր պատմաբանների և բանասերների առավել մեծ ուշադրությանն արժանանալու իրավունքը։ Մեր կարծիքով անփույթ է ներկայացված և նրա «Հայկական աշխարհ» ամսագիրը, արևելահայ իրականության առաջին մանկավարժական օրգանը. անտեսված է այդ հանդեսի էջերում տեղ գտած մանկավարժական ծանրակշիռ բաժինը, որտեղ ժամանակին նույնիսկ զետեղվել են Ռելինսկու, Դոբրոլյուբովի և Պիսարևի մանկավարժական հոդվածները։ Հետագայում «Մանկավարժանոց» ամսագրի հրատարակումով Ստեփանեն նշանակալից գործ է կատարել հայ ուսուցիչների դիտական որակավորումը բարձրացնելու ուղղությամբ։ Ավելին, իր իսկ խոստովանությամբ, Ստեփանեն «օր ու գիշեր» երազել է Եվրոպայի օրինակով մանկավարժական ուսումնական հաստատություն ստեղծել հայ իրականության մեջ (մանկավարժանոց) և միայն կյանքի ձախորդ հանգամանքներն են նրան խանգարել իրականացնելու այդ ծրագիրը։

Թերևս վիճելի կարելի է համարել Գարրիել Այվազովսկու հայացքներին տրված «կղերապահպանողական» ձևակերպումը, քանի որ կղերականությունը՝ հայացքներում և գործունեության մեջ և պահպանողականությունը այլազան հասկացություններ են և հազիվ թե իրավացի է գիտնականը՝ միևնույն լծի տակ դրանք շաղկապելով իրար։ Կարծում ենք նաև, շատ կուռ և հստակ շարադրված առանձին գլուխների վերջում ավելորդ կրկնություններ են դառնում ամփոփումները։

Սրանք, հարկավ, չնչին զանցանքներ են։ Վ. Երկանյանի աշխատությունը ճշգրիտ և հանդամանալից մի պատմություն է հայ դպրոցների դերի և նշանակության, ազգային լեզվի ու մշակույթի զարգացման համար ցարիզմի դեմ Կովկասի ժողովուրդների մղած պայքարի մասին։ Գիրքն ավարտվում է ռուսական առաջին հեղափոխության շնորհիվ հայ դպրոցների վերաբացմանը նվիրված էջերով։ Պետք է ենթադրել, որ հեղինակը կշարունակի հայ դպրոցների պատմությանը նվիրված իր աշխատությունը և կստեղծի արևելահայ դպրոցների նախահեղափոխական շրջանի ամբողջական պատմությունը։ Քննարկվող գիրքը այդ գործի հաջողության ամենամեծ գրավականն է։

Մ. Հ. ՄԵԼԻՔԱՐՅԱՆ